ՆՎԻՐՎԱԾ ՆԱՀԱՏԱԿ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Արարատյան Հայրապետական թեմի նախաձեռնությամբ ապրիլի 23-ը հայտարարված էր Մեծ եղեռնի նահատակ հոգևորականների հիշատակի օր:

Երևանի քաղաքային պանթեոնում, Կոմիտաս վարդապետի շիրմի մոտ, կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ Արարատյան Հայրապետական թեմի հոգևորականաց դասի և «Մանկունք» արական մանկական երգչախմբի մասնակցությամբ:

Արարողությանը ներկա էին նաև մեծաթիվ հավատացյալներ:

Դիմելով հավաքվածներին՝ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը նշեց, որ ոգեկոչելով Ապրիլյան նահատակների հիշատակը՝ անհրաժեշտ է առանձնակի շեշտել նաև այն հոգևորականներին, ովքեր մինչև վերջ անբաժան մնացին իրենց հոտից, մինչև վերջ կատարեցին հոգևորականի իրենց առաքելությունը և մարտիրոսացան: